ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13» դեկտեմբերի 2018 թվականի №182-Ա

«ԷՐԻԿ- ԱՐԵՆ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԷՐԻԿ-ԱՐԵՆ» ՍՊ ընկերության նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 143-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ «ԷՐԻԿ-ԱՐԵՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 03/29.4/2602-18 գրությամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում Ընկերության կողմից թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն ընկերությունը 01.06.2017թ-ի դրությամբ ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված ապառքներ պետական տուրքի մասով՝ 3 717.5 հազար դրամ և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 616.1 հազար դրամ, ինչպես նաև ընկերությունը սահմանված ժամկետում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունը:

Վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-327 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետի և 5-րդ կետերով նախատեսված պայմանը, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: Վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «ԷՐԻԿ-ԱՐԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՀՀ Լոռու մարզի Ցիցքարի գաբրոդիորիտների հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:
2. 2012 թվականի հոկտեմբերի 31-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/327 /նախկին 14/459/ թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-327 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-327 պայմանագիրը:
3. Ընդերքի գործակալության պետին՝
1) 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.
2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում.
3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:
4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

12/13/2018

X

VERIFIED OCSP 13-Dec-18 19:10:21 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118